



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՈՐՈՇՈՒՄ № 14Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2018 թվականի հուլիսի 27-ին, քննարկելով դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամներ ընտրելու վերաբերյալ հարցը, հիմք ընդունելով դատավորների ընդհանուր ժողովի հաշվիչ հանձնաժողովի՝ դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողովի անդամներ ընտրելու վերաբերյալ արձանագրությունը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով, 77-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝ Հայաստանի Հանրապետության դատավորների ընդհանուր ժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Ձևավորել դատավորների ընդհանուր ժողովի կարգապահական հարցերի հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

- 1) ՀՀ վարչական դատարանի դատավոր Արթուր Ավագյան՝ 5 տարի ժամկետով.
- 2) Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Մեսրոպ Մակյան՝ 5 տարի ժամկետով.
- 3) Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններից (քրեական մասնագիտացման) դատավոր Վարդան Ստեփանյան՝ 5 տարի ժամկետով.
- 4) ՀՀ վերաքննիչ դատարաններից՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Սլավիկ Թորոսյան, ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր Մխիթար Պապոյան և ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Արման Թովմասյան՝ 5 տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակվելու պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՈՒՐՔԻ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

27 հուլիսի 2018թ.
ք.Երևան